

Յոյն արեւելքի Հին-եկեղեցական տատարածաբանական գիտութիւնը իւր ծաղկման շրջանում (IV—V դր), — նրա զիսաւոր ուղղութիւնները եւ բնուօծ յատկութիւնները:

Ըստհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ IV-րդ դարը և V-րդի առաջին կէսը իրենց նշանակութեամբ վերին աստիճանի հետաքրքիր շրջան են ներկայացնուում: Յոյն-հռովմէտկան կայսութեան քրիստոնէութեան արտաքին գրութեան մէջ առաջ եկած հիմնական փոփոխութիւնը եկեղեցւոյ ներքին կեանքի համար ամենաբարեյաջող հետեւանքներն ունեցաւ, լիակատար հնարաւորութիւն տալով նրա անդամներին հոգւոյ ըոլոր ոյժերը եկեղեցւոյ ներքին հարցերի լուծման վերայ կենդրոնացնելու: Գոյսւթեան համար մշտաքարին կութեներով չշլատուելով, եկեղեցին սկսեց լիակատար կեանքով ապրել: Բայց, հոկտոմիկ ըոլոր յոյժերի, որ հալածանքի ճիւտղի անյայտանալով, եկեղեցւոյ հանդիսա կեանքը և խաղաղութիւնը այլ ևս չեն խանդարուել՝ երեաց, որ իսկապէս նշանաւոր և էական կոիւը նոր է սկսուում, ուստի և նոր ժամանակը իրաւամբ մնձ վէճերի շրջան անսւնն ստացաւ: Գրանք ընական շարունակութիւն էին նախորդ աստատածալանական մտքի աշխատանքի, իսկ լայն, նոյն իսկ նրանց ծայրացեզ զարգացումը — ներքին անհրաժեշտութիւն, երբ ազատ հանգէս եկան, բացուեցին և ընդհարուեցին էական և ձեւական տարածայնութիւնները, սրոնք քրիստոնէութեան աշխարհի զանազան մասերում նախկին դարաշրջանի ընթացքում կազմակերպուել էին: Կոիւը յառաջ կոչեց լարուած, վերին աստիճաննի ուժգին, կենդանի և կարող շարժումն աստուածաբանական մտքի իւր արգիւնաւորութեամբ և առանձնայատկութեամբ, որ ունեցաւ բազմատեսակ սահմագործող գործունէութիւն: Քրիստոնէական հանճարը առանձին ոյժով երեան է գալիս աստուածաբանական գիտութեանց զանազան ճիւղերի մէջ, գլխաւորապէս քրիստոնէութեանց բունքները, էութեան վերայ կենդրոնանալով: Սոյն ժամանակի աստուածաբանական երկերը ուղեցոյց են ծառայում ընդհանուր քրիստոնէութեան յաջորդ սերունդների համար: Նրանց մէծ հեղինակները, որոնք հաւատացեալներին ճշմարտութեամբ էին կրթում, գլխաւորապէս «Եկեղեցւոյ Հայրեր» անուն ստացան: Նրանց աստուածաբանական աշխատանքների եղակացութեանց վերայ էր հիմնում մերձակայ շրջանի աստուածաբանական միտքը, մինչեւ այսօր դրանցով էլ ապրում է

կրթութեան և եկեղեցւոյ կեանքի կենդրոնները, այլ և անշան պարսկեանները (սարկու) համահաւասար իրենց իրաւունք և պարտականութիւն էին հաւաքում ընդհանուր գործի մէջ մասնակցելը: Անթիւ ժողովները մեծ քանակութեամբ մասնակցողների, որոնք հաւանում էին հաւատոյ գաւանութեան մի որոշ ձևը, մերժում ուրիշներին, ապստամբում եպիսկոպոսների գէմ, որոնք այս կամ այն հաւատոյ հանդանակն էին ընդունել, որի մէջ Ենթադրեալ կղերականները և աշխարհականները հաւատից հեռանալ էին տեսնում, դաւ անաբանական ոկզբունքների պատճառով բաժանումն պարփիկանների մէջ,—այս բոլորը բաւականացափ ապացոյց են այն բանի, թէ աստուածաբանական հարցերը Ենչպէս զբաղեցնում էին քրիստոնեայ հասարակութեանը: Ամեն բան շարժման մէջ էր, ամեն տեղ վիճում էին, ամենքը յուզուած էին: Եւ դժուար չէ նկատել, որ ասաւածաբանական մտքի զանազան ուղղութեանց կորիւ էր այս, աստուածաբանական զանազան դպրոցների՝ իրենց որոշ եկեղեցական և աստուածաբանա—վիլխոտիայական աւանդութիւններով և գաւանաբանական սկզբունքների բանալու և շինելու գիտական մեթոդներով, և իրեն առանձին տերմինաբանութեամբ: Խնքն ըստ ինքեան հասկանալի է, որ ընտաղանցական խնդիրների դժուարութեան պատճառով, որոնց վերայ յենում էր փորձող միաքը, համեմատաբար միայն քչերը կարողացան անկախ և միանգամայն տիրել նրանց և առաւել ևս գրականապէս նրանց մշակելու վիճակի մէջ էին: Ուստի և աստուածաբանական զանազան ուղղութիւններ արտայայտութիւն դժան միայն մի քանի աշքի ընկնող անձնաւուսութեանց երկերի մէջ,—նրանց երկերը հանդիսանում են միակ աղքիւրը աստուածաբանական մտքի հետզհետէ զարգացումը հասկանալու համար: Սակայն պէտք է յիշել, որ այս գործողների նշանակութիւնը և յաջողաւթիւնը հետեւանք էր այն բանի, որ նրանք ամբողջ հոսանքների արտայայտիչ էին հանդիսանում,— նրանց հետեւանք էին շատ թէ քիչ կուսակիցներ և միախորհուրդներ, որոնց անունները հանդէս են գալիս միանդամայն պատահաբար, այն էլ գլխաւորապէս ժողովների մէջ:

Ծաղկման շրջանի ասաւածաբանական դիտութիւնը, ինչպէս և այդ շրջանի ամբողջ եկեղեցական կեանքը, ստեղծում էր և զարգանում այն հիման վերայ, ինչ որ նախորդ դարերում կատարուած էր: Այժմ հարուստ հունձ էր հաւաքած, որի առատ ցանքուր, թէկ ոչ բարեյացող արտաքին պայմաններում, կատարուած էր առաջ: Եկեղեցւոյ արտաքին դրութեան մէջ

այն համողմամբ, թէ այդ ժամանակ առաջ եկան և լուծուեցին այն ըոլոք էտիան հարցերը, որ մարդկութիւնը կարող է տալ քրիստոնէութեանը: Եկեղեցւոյ պատմութեան ոչ մի շրջանը դրա հետ համեմատուել չի կարող, որ կլասիկ նշանակութիւն է ստացել: Ուստի, շատ ընտիան է այս շրջանի առտուածաւ բանական աշխատանքով հետաքրքրուելու ձգտումը, և անպայման նրա կարեռ նիւթական բովանդակութիւնից զատ, որոշել այն ճաւ ապարհները, որով գնում էին առտուածաբանական միտքը, աղբեւըները և միջոցները, որոնցից նա օգտում է այդպիսի վառաւոր հետեանքների հանելու համար, հաւասարապէս և այն բարեյաջող պայմանները, որոնցից նա օյֆ էր ստանում իւր դարդացման համար: Այս հարցերը ոչ միայն պատմական, այլ և խորին գիտական, դորջնական նշանակութիւն ունեն, ինչպէս բացառապէս շրջանի կարեռ լինելու պատճառով, նոյնպէս և առտուածաբանական գիտութիւնների մասին եղած ժամանակակից հարցի և նրանից սպասելիք պահանջների պահճառուով:

I

Եկեղեցական—աստուածաբանական կեանքի լնդմանուր բնաւորութիւնը I—V դարերում Եկեղի—աստուածաբանական դիտութիւնը նախ քան Նիկիական շրջանը: Զատագովների աստուածաբանական գործունէութիւնը II դարում Ա. Երենիոսի Փոքր—Ասիայի աստուածաբանութիւնը: Գիտական—տոտուածաբանական շարժումն քրիստոնէական աշխարհի գանագոն մասիրում եւ Եկեղեցւոյ ներքին խնդիրների լուծման կարիքը: Որոգինէս,—Նրա աստուածաբանական գործունէութեան բնաւորութիւնը եւ Աղէքսանդրեան դրաբոցի ուղղութիւնը: Հուանքներ աղէքսանդրիան դպրոցի մէջ Որոգինէսից յիտոյ: Փոքր—Ասիայի մատուածարանութիւնը IV-րդ դարի սկզբին: Ա. Մեդովիս Ոլիմպիացին: Անտիոքի դպրոցը:

Եզր մի հայեացը ենք ձգում յոյն-առեւելքի IV և V դարի Եկեղեց։—պատմական կեանքի ներքին շարժումների և դէսթերի ընթացքի վերայ, ամենից առաջ աչքի է ընկնում այն փառար, որ այդ ժամանակ քրիստոնէական դաւանութեան մեջ հարցելն էին ամբողջ Եկեղեցւոյ գործը կազմում։ Կենդանի հետաքրքրութիւն ցոյց էին տալիս ոչ միայն եպիսկոպոսները և ընդհանբապէս երենց կոչմամբ և կրթութեամբ գըսնց լուծման համար կոչուած անձները, այլ և ժամանակակից հասարակութիւնը մինչև ստորին գասակարգը: Ոչ միայն ժամանակակից քաղաքակալթութեան կենդրունները, ոչ միայն քրիստոնէութեան

առաջ եկած փոփոխութիւնը չդաւաճանեց նրա ներքին էութեանը, — և միայն բարեյաջող հանգամանքներ առաջ բերեց և հնարաւորութիւն տուեց լիակատար, ամենատեսակ և պարզ կերպով յայտնագործել, բացել, և որոշ չափով կատարեալ դարձնել այն շարժումները, որոնք ծագել էին և տպըում էին նրա մէջ մինչեւ այդ ժամանակը: Ուստի և, ինչորէս եկեղեցւոյ տըռողջ ներքին կեանքը, նոյնական և աստուածաբանական մարդի դարգացումն քննելի շրջանում, իւր զանազան ուղղութեանց և հոսանքների մէջ, հասկանալի կարող է լինել միայն նախորդ շրջանում ձեռք բերուած դարգացման և հետեւանքների շաղկապմամբ:

Աստուածաբանական մտածմունքի անհրաժեշտութիւնը քրիստոնէական հաւատի զբական բովանդակութեան նկատմամբ գրուած է ինչպէս հէնց քրիստոնէութեան, նոյնական և մարդկային հոգու էութեան մէջ: Եթէ քրիստոնէութիւնը նոր կեանքի ոկիզըն է, բարոյական-կրօնական, աշխարհը վերանորոգող ոյժ է, մարդկութեան մէջ նոր կեանք ոտնեղող, այն ժամանակ այս նոր կեանքը իսկապէս կարող է առաջ գոլ միայն կրօնական փորձառութեանը համեմատ մարդու Առտուծոյ հետ ունեցած յարաբերութեան մէջ էական փոփոխութեան գիտակցութեան պայմանով, — Քրիստոսով վերականգնուած աստուածահաղորդակցութեան գիտակցութեան, որը և կազմում է նոր կեանքի կենտրոնը: Այս գիտակցութեամբ փրրկուած մարդու համար փայլում էր նոր լոյս, ճշմարտութեան ճանաչումն, որը ոչ միայն ընդլայնեց և հարուացըց, այլ և մարդկայինի և աստուածայինի մասին եղած մարդու մոքի նախկին կարգը միանգամայն կերպարանափոխեց: Այս լոյսը ստեղծում է և հաստատում մարդու մէջ նոր գիտակցութիւն և ճշմարտութեան հանկացողութիւն այն չափով, որտեղուայ ոք նա մարդու հոգուն հազորդում է իւր փրկարար բովանդակութիւնը. սակայն գրան հասնում է մարդ այն ճանապարհով, որ քրիստոնէան իւր մտածմունքներով մանում է հաւատոյ մէջ, քննում է այն, բացատրում, հասկանում: Այդ պիտով, հաւատը ներփակելով իւր մէջ գիտութիւնը, պատճառ է լինում աւելի խորը թափանցելու նրա մէջ, ոչ թէ միայն խոստովանել, այլ և գիտենալ: Միւս կողմէց, մարդկային հոգւոյ էութեան մէջ պահանջ կայ ըոլորը, ինչ ոք նրա երեակայութեան, ըմբռնման, փորձի առարկայ է կազմում, իւրացնել մտածողութեան միջոցով և աւելի կամ պակաս ուղիղ գիտութեան մոտեցնել: Այս ընդհանուր օրէնքը քրիստոնէութեան նկատմամբ այն մեծ նշանակութիւնն ունի, ոք այսուեղ ինչիքը

անձնական բարձր և խորին շահերին է վերաբերում, որտեղ
մարդու համար նոր կեանք, նոր աշխարհ է ոկտում: Քրիստոս
նեան գրան համայնքու համար պէտք է իւր մաքով իւր հաւատի
բովանդակութեան մէջ մանի, և նրան զարգացման ամենա-
մանը առաջանների վերածէ, հաւանաց, համաձայնացնէ քրիս-
տոնէական դիտակցութիւնը իրենի հետ, ընէ կրօնական փոր-
ձառութեան յարաբերութիւնը միւս փորձառութիւնների
մամբ, հաւատի բովանդակութիւնը միւս բոլոր դիտութիւնների
հետ յարաբերութեան մէջ զնիլ: — մի խօսքով հաշիւ տալ իւր
հաւատի համար: Այստեղ չպէտքէ ահանել պարզ հետաքրքրու-
թիւն, որ մինտրում է աւելին քան ունի, և կամ սեպհական
անվատահութիւն և ներքին կառկած ընդունած հաւատի նկատ-
մամբ, — ընդհակառակը, այստեղ արտայայտում է հաւատ-
առուն համոզումն, որ քրիստոնէական վարդապետութիւնը,
ինչպէս իրօք աստուածային ճշմարտութիւն, կարող է և պէտքէ
արդարանայ հոգով ճանաչողների առաջ: Այդ ժամանակ հա-
ւատը բարձրութ է ինքնագիտակցութեան, սեպհական հա-
մոզման աստիճանին, իսկ զորա համար ոչ միայն կը անտկան
փորձառութիւն է հարկաւոր, այլ և միաք և հետախուզու-
թիւն: Եւ աստուածային խօսքը, եթէ ոչ բացառապէս, զո-
նեա գլխաւորապէս մարդկային դատողութեանն է դառնում
և առիթ է տալիս և առաւել խօսապէս թափանցելու նրա
մէջ^{*)}:

Աւելի մէծ աստիճանով հաւատը դիտութեանը մօսե-
ցնելու այս պահանջն ու զրգումն արտայայտել է ամբողջ
եկեղեցին: Նոր ինքը պէտք է իրեն ճանաչէր, Աստուածոյ փրկա-
րար միտքը իւեն սեպհական դարձնէր, որպէս զի ճշմարտապէս
տիրէր նրան: Աստուածային գանձը, որ եկեղեցուն էր հաւա-
տացած, մեռած գանձ մնալ չէր կարող, նա իւր ներքին պա-
հանջի հոմեմատ կազմում է իւր գաւանանքի հիմքերը ճանա-
չելու: Այս անհրաժեշտութիւնը ոյժ էր սատնում նաև եկե-
ղեցւոյ կազմում: Նա պարտաւոր էր ազդերին հրաւիրել խաչի
մօտ և նրանց հաւատի մէջ կը թել: Ասկայն այս կոչման իւրա-
դուռը եկեղեցւոյ համար մի այլ խնդիր ունէր — տալ հա-
ւատի բովանդակութեանը որոշ, կենդանի արտայայտութիւն
եկեղեցին ոչ միայն պէտքէ ասէր, որ նա հաւատում է, այլ և
թէ ինչի՞ է հաւատում, ե՞սչ բովանդակութիւն և միաք ունի՞ն

^{*)} Հմատ Thomasius D. Die christliche Dogmatengeschichte als Entwicklungs—Geschichte des kirchlichen Lehrbegriffs. 2. Aufl., I. Bd. Erlangen 1886 S. 4—7:

իրեն հաւատացած Յայտնութեան ճշմարտութիւնները, և պէտք է այն ձեռվլ ասէք, որ այդ հասկանալի, շօշափելի և ըմբռնելի լիներ լինչպէս նորահաւատաների այնպէս էլ իսկական անգամ՝ ների համար, — միայն այս ձեռվլ հնարաւոր է արտաքուստ և ներքուստ ինքնակառուցումն եկեղեցւոյ: Այդ ըոլորը կաթելի էր ձեռվլ ըերել մտքի, հետախուզութեան և գիտութեան միջոցով: Այսուեղ են գտնում այն հիմքերը, թէ ինչո՞ւ քրիստոնէութեան բավանդակութիւնը հէնց երեան դալու օրից մարդկային միտքը քննութեան առարկայ է դարձնում և ինչո՞ւ եկեղեցին առաքեալների ժամանակից առաջ եկեղեցական գիտութիւն չէր: Ուստի եկեղեցապատմական գիտութիւնը չէ կարսող որոշել այն ժամանակը, երբ հիմք է զրուել և էտիան առարկել են գյայցել այն բանի, ինչ որ ընդունուած է իսկական մտքով առտուածաբանական գիտութիւն անուանել, և թէ ի՞նչպէս և ի՞նչպիսի հանգամանքներում քրիստոնէաների մէջ մուտք է գործել «կեղծանուն գիտութիւնը»: Դրանով միայն կայելի է քացատրել այն փաստը, որ, եկեղեցւոյ ներքին անհրաժեշտ պատմական դրութեան ոյժով, երբ աստուածաբանական մտքի աշխատանքը պէտք է ցոյց տար վերին աստիճանի լարուածութիւն, այն ժամանակի, մինչ այդ պահպանուած պատմական յիշատակաբաններով և անդեկութիւններով, նրանց վերայ որբան դատել կարելի էր, երեւաց, որ շատ շուտով ցոյց տուեց քաւականաչափ քազմակողմանի շահեր և շարժունութիւն, բազմատեսակութիւն ձկտումների, որոնց մէջ արտայացտութիւն դատան ներքին զարդացման զանազան հսուանքներ եկեղեցական կեանքի և մասնաւորապէս աստուածաբանական մտքի, որոնք համապատասխան էին ժամանակի գործնական պահանջներին:

Քրիստոնէութեան կոչման շահերը յունա-հռոմէական աշխարհում և վերջինիս յարաբերութիւնը դէպի քրիստոնէութիւնը եկեղեցւոյ գոյութեան հէնց առաջին շրջանում կեանքի կոչեցին աստուածաբանական մտքի նշանաւոր յայտնութիւններից մէկը, համարձակ կերպով հարցը գնելով հեթանոս վիլիոսիայութեան, նրա հառկացողութեան և լեզուի յարաբերութեան նկատմամբ, որպէս միջոց քրիստոնէութեան վարդապէտութեան բացատրութեան: Քրիստոնէութիւնը, — որ ամենից առաջ քարոզուեց Յուղայի լեռներում և Գալիլիայի ծովի ափին ժողովրդից եկած մարդկանցով, հրէայ ձկնորսներով և արհեօտաւորներով, — տարածուեց աշխարհի մէջ, որ արդէն յագեցած էր յունական կրթութեամբ: Միջերկրական ծովին շրջապատող ըոլու երկրներում, հին քաղաքակրթութեան կենդրուական կետերում երեսն եկան քրիստոնէական համայնքներ,

որսնց անդամներն էին ոչ միայն պարզաբարտները և ճորտերը, ոյլ և ամենատեսակ կոչման և կրթութեան տէր մարդկէ։ Այսպէս, անխուսափելի կերպով նոր վարդապետութիւնը քաղմատեսակ մասնակցութեան մէջ մտաւ կրթութեան հին տարրերի հետ, որն այսով թափանցուած էր հասարակութեան բարձր գասակարդի գասափարակութիւնն ու կրթութիւնը և ամբողջ հասարակական կեանքը։ Հարկուոր էր հող գտնել, որի վերայ կորպելի լինէր վերակուղեցել փոխադարձ հասկացողութիւն կրթուած հեթանոսների և նոր կրօնի հաւատացեալների մէջ։ Անյայտը միշտ կարելի է յայտնիով բացատրել։ Յաւոնութիւնը նոր լեզու չոտեղծեց, նա օգտուեց լեզուի գրական ձևերով, որպէս զի զրանցով կշռէ նոր ճշմարտութիւնները և նոր հիմք դնէ բարօյակոն կեանքի։ Նա առանձին տերմիններին և հասկացողութեանց տալիս էր նոր, աւելի խորին և ամբողջ միտք, լուսաւորելով և թափանցելով նրանց կրօնական աշխարհայեցողութեան նոր լոյսով։ Եւ քրիստոնէական վարդապետութեան արգիւնաւէտ բովանդակութեան խրացուցման համար ուրիշ ճանապարհ չկար, անհրաժեշտ էր հիմքի մէջ զնել գործառնութեան մէջ եղած հասկացողութիւնները և նրանց կապակցութիւնները, որոնք ամուր կերպով հաստատեցին տերմինաբանութիւնը։ Որպէս զի քրիստոնէութեան ճշմարտութեանց համար մատչելիութիւնը ստեղծուի կրթեալ շրջանների գաղափարների աշխարհում, բնական և յուսալի միջոց գրա համար կարող էր միայն յունական վիելսովիայութիւնը լինել, որ իւր կնիքն էր զրել յայն—հոռվմէական հասարակութեան մտքերի ամբողջ կազմութեան վերայ։ Հետո այս միջոցն զիմեցին քրիստութեամբ մէջ ամենը կապակցութեան մէջ, նրանք հին աշխարհի գիտական քննութեան հետեւնքներին բացարձակ արժէք չվերագրեցին, բայց հնարաւորութիւն ստացան միեւնոյն ժամանակ, բայց այս մասնաւոր մարդկային ճշմարտութիւնների հետեւանքները։ Եւ որ ամենակարեսրն է, նրանք գիտէին ժամանակակից կրթեալ հասարակութեան կրօնական վիելսովիայական պահանջները, որ ծարաւ էր վկայութիւն և հաստատութիւնների հետեւանքները։ Եւ որ ամենակարեսրն է, նրանք գիտէին ժամանակակից կրթեալ հասարակութեան կրօնական վիելսովիայական պահանջները, որ ծարաւ էր վկայութիւն և հաստատութիւնների հետեւանքները։ Համար Աստուծոյ բոլոր գաղափարների մասին իրականութեան լինչպէս հոգեոր էակի, բարոյական օրէնքի, անմահու-

թիւն էին ստացել և հեթանոսական վիելսովիայութեան միջով անցել։ Նրանք այդտեղ ճշմարտութիւն չդատան այլ միայն ուսուումնասիրեցին քննութեան եղանակներ և ձևեր, որոնք գործածական էին ժամանակակից գիտութեան մէջ, նրանք հին աշխարհի գիտական քննութեան հետեւնքներին բացարձակ արժէք չվերագրեցին, բայց հնարաւորութիւն ստացան միեւնոյն ժամանակ, բայց այս մասնաւոր մարդկային ճշմարտութիւնների հետեւանքները։ Եւ որ ամենակարեսրն է, նրանք գիտէին ժամանակակից կրթեալ հասարակութեան կրօնական վիելսովիայական պահանջները, որ ծարաւ էր վկայութիւն և հաստատութիւնների հետեւանքները։ Համար Աստուծոյ բոլոր գաղափարների մասին իրականութեան լինչպէս հոգեոր էակի, բարոյական օրէնքի, անմահու-

թեան և հանդերձեալ կեանքում վարձատրութեան, որ խոստանում էր ակրապետաղ կրօնական փիլիսոփայութիւնը։ Քրիստոնէական վարդապետութեան ընդհանութ միութեան այս իսկ ճշմարտութիւններն են բանում ջատագովները հեթանոս համարակութեան առաջ ժամանակակից կրթութեան և զարդարման մտածողութեան հասկացողութիւնների և ձեւերի մէջ, ապացուցանելով, որ պարզ վարդապետութեան մէջ է պանուում ամիսը քան, ինչ որ մինարում է ճշմարիտ փիլիսոփայութիւնը^{*)}, միայն այդ է յուսալի և օդուակար փիլիսոփայութիւն, բայսանդակութեամբ մաքար և վահմամբ աստուածային, չնայ է միայն կրօնաւաղատիչ և վերանորոգիչ ճշմարտութիւն բերուում։ Այս հիմքը, որի վերայ վարդացաւ ջատագովների աստուածարանութիւնը, հաւատի անձնուեր վարդապետութիւնն էր, ինչպէս որ քարուզում և պահպանուում էր եկեղեցու մէջ, որի ճշմարտութեան մէջ երենք անպայման համոզուած էին, նրանք Գնոստիկեանների նման չէին ձգտում յեղափոխել քրիստոնէութիւնը, նրա գրական բավանդակութիւնը չէին յարմարեցնուում առանձնույատուկ ըստական փիլիսոփայութեան երեակայական թէօրիաներն։ Այսպէս, բարի քրիստոնէայ ջատագովների երկերի մէջ քրիստոնէական վարդապետութեան յարմարեցնելու փարձնեղաւ հելլենական կրօնական փիլիսոփայութեան սկզբունքների, որով և հիմք դրուեց եկեղեցական աստուածարանութեան ինչպէս գիտութեան, որ դորժագրուում էր կլաստիկ քաղաքակրթութեան հասկացողութեամբ։ Իւր ոկզինական ձեռլի ջատագովական գրականութիւնը արդիւնք էր անցողական զըրտիւն, կռու կռաւուի, որը վաղ թէ ուշ պիտի վճռուեր, իոկ այդ կռւուի իւր վախճանը գտաւ նուև գրական-փիլիսոփայական ձեռք, բայց աւելի կարեսը էր այն, որ եկեղեցին, չնայելով ջատագովների աստուածարանութեան շատ պահածութիւններին, բարձր գնահատեց նրանց ծառայութիւնները և դրանով ճանաչեց նոցա աստուածարանական գործունէութեան օրինականութիւնը։ Սակայն ջատագովական գրականութիւնը առ կախ թողեց այն հարցը թէ, եկեղեցւոյ գորութեան մէջ պէտք էր յարմարեցնել կլաստիկ գրականութեան և փիլիսոփայութեան ձեւերը միայն աստաքին աշխարհի նկատմամբ, թէև եկեղեցականներին հարցել լնուելու ժամանակ։

Աստուածարանական մտքի մի այլ ուղղութիւն յառաջ եկաւ և հաստատուեց եկեղեցւոյ մէջ Գնոստիկեանների դէմ մղած կռիւների աստիճանաբար վարդացմամբ, որի մէջ ներ-

^{*)} св. Іустинъ, діалогъ съ Трифономъ VIII. 1.


կայացրուած էր քրիստոնէութեան խիստ հելլենականութիւնը, աղաւազելով նրա էռթիւնը և գրկելով պատմուստերիօլուգիքական ընաւորութիւնից:

Վնոստիքականութիւնը առաջին անդամ դիտական քննադատութեան ենթարկեց քրիստոնէական աւանդութիւնը և քրիստոնէական վարդապետութեան գրաւոր աղբեւլները, հեռացնելով նրանցից այն ըուլորը, ինչ որ իւր կարծիքներին և անութիւններին չէր հոմաձայնուում; Վնոստիկեանների տեսութիւնների մէջ արտայացութիւն գտած օգտաները գրաւում էին նաև եկեղեցւոյ մտածող շատ քրիստոնէաների; Գրանով զօրեղանում էր Վնոստիքականութեան վնասակարութիւնը և որոշ շափով որոշում էր նրա հետ եկեղեցւոյ հայրերի կռւի ընտառըութիւնը; Կռիւը ստիպեց եկեղեցուն բացել իւր սեպհականութիւնը և տեսականապէս հիմնել այն: Եթէ քրիստոնէութեան հոգեար խորին համացողութեան առաջ, որոնց պահանջում էր Վնոստիքականութիւնը, եկեղեցւոյ հաւատը ոզորմելի և սահմանափակ էր թւում, այն ժամանակ անհրաժեշտ էր Վնոստիկեանների սխտեմներին դնել համազօր տեսական դրութիւն: Եկեղեցական աստուածաբանական միտքը պէաք է պարզ և որոշ սահմանէր նիւթական և ձեական սկզբունքները, որի վերայ պէաք է ստեղծուէր եկեղեցական աստուածաբանական դիտութիւնը; Այս ձգտում էր կատարել աստուածաբանների Փոքր-Ասիայի գլուխը: Փոքր-Ասիայի համայնքները 8.-րդ դարում եկեղեցւոյ հոգեոր կենդանի մասն էին կազմում: 150 և 200 թ. թ-ի մէջ յայտնի են մը շարք Փոքր-Ասիական աստուածաբաններ, որոնք ջատադուկական և հականերիականական դրուածքներ ունին. Մելիտոն, Հերապոլիս Ապողինարիոս, Բագրոն, Միլահադ և լն: Աւելի քան հաւանական է, որ նրանք էապէս միեւնոյն աստուածաբանութիւնն էին ներկայացնում, Փոքր-Ասիական աստուածաբանական աւանդութիւնը, որի աւելի եռանգուն և աւելի պարզ արտայածէն էր Ահոնի Ս. Խրինէոսը: Ճշմարիտ քրիստոնէական վարդապետութեան, նրա բավանդակութեան, աղբեւրների և յայտանշանների ճշմարտութեան ճանաչելու հարցի նկատմամբ Ս. Խրինէոսը բանում է եկեղեցական ճշմարտութեան համացողութիւնը: Միայն եկեղեցւոյ մէջ է ճշմարտութիւնը, եկեղեցին ունի առաքեալներից ստացած թղթեր և հաւասարապէս մինչեւ առաքեալները համար բերանացի աւանդութիւն, որի ամբողջ անվիթէպ պահպանութիւնը անընդհատ յաջորդական եպիսկոպոսութեամբ է ապահովւում: Աստուածաբանական դիտութեան համար հաստատում է

որոշ խնդիրը. Նա յայտնութեան բովանդակութեանը չպիտի դաւաճանէնէ, այլ հաւատոյ անփոփոխ օրէնքների վերայ հիմնուած զգուշութեամբ պիտի քննէ առակներում արտայայտած մտքերը և համաձայնեցնէ հաւատի բովանդակութեանը, բայ նայ մարդկային փրկութեան նախալսնամութիւնը, բացատրէ յայտնութեան եղանակները և լին ու նոր Կտակարանի նպատակը, ապացուցէ Քրիստոնի մարմնացումը և յարութիւնը անոասան համոզմունքի հիման վերայ, որ բոլոր եկեղեցիները երկրիո վերայ ունին միենոյն հաւատը, որ ստացել է նա առաքեալներից և պահպանել է մաքրութեան և անվնաս դրութեան մէջ^{*)}): Զատադովների փելիսոփայտական-առտուածաբառնական գաղափարականութեան հակառակ Ս. Իրինէոսի առտուածաբառնութիւնը կըուժ է աստուածաշնչական-իրական ընտառորութիւն։ Նա իրեն նպատակ չէ գնում ապացուցանել քրիստոնէութիւնը երբու ճշմարիտ փելիսոփայութիւն, և Գնուտիկեանների նախնական տեսութիւնների հակառակ ամրողացին հաստատում է Յայտնութեան փաստերի վերայ, ուստի և նրա աստուածաբառնութիւնը գլխաւորապէս «փաստերի աստուածաբառնութիւն է» և ամենից առաջ Ս. Քրքի կենգրունական փաստի—մարդկութեան ազատութեան Քրիստոնով։ Ս. Իրինէոսի տեսութեանց հիմք ծառայում է ոչ թէ Յօդոս (Բանը), Ենչպէս Աստուծոյ և աշխարհի մէջ յարաբերութեան միջնորդ, այլ Քրիստոս, Աստուածամարդը, Ենչպէս միջնորդ փրկութեան։ Նրա համար քրիստոնէութիւնը—փրկութեան կըօն է, որ կատարուել է Քրիստոսի միջոցով Բանի մաքմնացմաքը։ Ս. Իրինէոսի աստուածաբառնական վարդապետութեան այս կողմը վերջերը խիստ ազգեցութիւն ունեցաւ աստուածաբառնական մտքի վարդապահան և ուղղութեան վերայ։

(Յարունակելի)

թարգմ. Արտակ Վարդապետ



^{*)} Обличеніе и опроверженіе лжеименного знанія. IV. 55·8; III. 4·1; II. 28·2; III. 5·1·4; IV. 26·2; 4·10·5.